Արձանագրություն N 2

ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր

11 սեպտեմբերի 2025թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Զաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Սևակ Ֆիրզիկյան, Ռաֆիկ Ադամյան, Արթուր Երվանդյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մարինե Համբարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Ա. Զաքարյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին
4. Գնահատման մասին,
5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
6. Ներկայացված հիմնավորումների մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2. ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Զաքարյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե, Հեռախոս	Էլ. Փոստի հասցե
1	ՏԱ Տիգրան Հայկի Մարտիրոսյան	Արմավիրի մ., գ. Հացիկ, 4փ., 20շ., բն. 2, Հեռ.՝ 094956111	artur20222@bk.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին

(Ա. Զաքարյան)

Մասնակցի կողմից ներկայացված հայտում՝ հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում՝ փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից առաջարկված պայմանագրի կատարման գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	ՁԻԼ ավտոմեքենա				4 000 000
	ՏԱ Տիգրան Հայկի Մարտիրոսյան	3667000		3667000	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատման մասին

(Ա. Զաքարյան)

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	Ընտրված մասնակից ճանաչել՝	
1	ՖԱ Տիգրան Հայկի Մարտիրոսյան	1

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Ա. Զաքարյան)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում:

»Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում, ուստի ընտրված մասնակցին ուղարկել նաև պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6.Ներկայացված հիմնավորումների մասին

(Ա. Զաքարյան)

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Զաքարյան

Անդամներ՝ Ս. Ֆիրզիկյան

Ռ. Ադամյան

Ա. Երվանդյան

Քարտուղար՝ Մ. Համբարյան